



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ N° 02-Լ

#### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 24-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 6-րդ կետերը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասով՝ դատարանների նախագահների խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը հաստատելու, հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի փետրվարի 02-ի թիվ 03-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 24-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. 1.1-ին կետում երկրորդ տողի «վարչական» բառից հետո լրացնել «և սնանկության» բառերը, իսկ «9» թվից հետո՝ «.1» թիվը.

2. հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի սնանկության գործերի քննության վերաբերյալ ամսական հաշվետվության ձևը՝ համաձայն թիվ 9.1 հավելվածի:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

21 փետրվարի 2014թ.  
ք. Ստեփանակերտ